ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ **N 51-Ա**

<09> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ **2015**ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2013** ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ **18**-Ի ԹԻՎ **65-Ա** ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2015թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 36 %-ի չափով՝ 237500 (երկու հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր վաթսուն) դրամ
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2014 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու և համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 63 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին » թիվ 65- Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝	ԿՈՂՄ 8 (ութ)	ԴԵՄ 0 (զրո)	ՁԵՌՆՊԱՀ 0(զրո)
Արտավազդ Սանթրոսյան			
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գևորգյան			
Կարեն Սերգոյան			
Հովհաննես Բաղդասարյան			
Սամվել Հովիկյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Մխիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱԴԻՈՍՅԱՆ

«11» դեկտեմբերի 2014թվական

գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 52

<09> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18- Ի ԹԻՎ 66 ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԹԻՎ 29 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 24(քսանչորս) ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 17-ի թիվ 30 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 66 որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝	ԿՈՂՄ 8 (ութ)	ԴԵՄ 0 (զրո)	ՁԵՌՆՊԱՀ 0(զրո)
Արտավազդ Սանթրոսյան			
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գևորգյան			
Կարեն Սերգոյան			
Հովհաննես Բաղդասարյան			
Սամվել Հովիկյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Մխիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԲԱԳՐԱՏՅԱՆ

«11» դեկտեմբերի 2014թվական

գ. Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու 2014թվականի
դեկտեմբերի 9-ի թիվ 52 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)
1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	185250	78
2	Համայնքի ղեկավարի օգնական	1	118750	50
3	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	114000	48
4	Աշխատակազմի քարտուղար	1	185250	78
5	Գլխավոր մասնագետ	1	118750	50
6	Գլխավոր մասնագետ	1	118750	50
7	Գլխավոր մասնագետ	1	118750	50
8	Գլխավոր մասնագետ	1	118750	50
9	Գլխավոր մասնագետ	1	118750	50
10	Առաջատար մասնագետ	1	114000	48
11	Առաջատար մասնագետ	1	114000	48
12	Առաջին կարգի մասնագետ	1	95000	40
13	Առաջին կարգի մասնագետ	1	95000	40
14	Առաջին կարգի մասնագետ	1	95000	40
15	Առաջին կարգի մասնագետ	1	95000	40
	Ընդամենը	15		
	Տեխնիկական սպասարկման անձնակազմ			
1	Տնտեսվար	1	71250	30
2	Վարորդ	2	71250	30
3	Համակարգչի օպերատոր	1	78375	33
4	Համակարգչի օպերատոր	1	71250	30
5	Հավաքարար	1	71250	30
6	Բակապահ	1	66500	28
7	Պահակ	1	66500	28
8	Պահակ	1	66500	28
	Ընդամենը	9		
ԸՆԴԱՄԵՆԸ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ		24		

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 53

<09> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԹԻՎ 32 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին

որոշում է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային ոչ առևտրային կազմակերկությունների աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 18 -ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային ոչ առևտական կազմակերպությունների աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 67 որոշումը:
3.1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված աշխատակիցների համար աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը սահմանել 70822 դրամ:

Ավագանու անդամներ՝	ԿՈՂՄ 8 (ութ)	ԴԵՄ 0 (զրո)	ՁԵՌՆՊԱՀ 0(զրո)
Արտավազդ Սանթրոսյան	----------	----------	----------
Արմեն Բաբուջյան	----------	----------	----------
Արտաշես Գևորգյան	----------	----------	----------
Կարեն Սերգոյան	----------	----------	----------
Հովհաննես Բաղդասարյան	----------	----------	----------
Սամվել Հովիկյան	----------	----------	----------
Վանիկ Մկրտչյան	----------	----------	----------
Վահան Մխիթարյան	----------	----------	----------

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

«11» դեկտեմբերի 2014թվական

գ. Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու 2014 թվականի
Դեկտեմբերի 9-ի թիվ 53 որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահման-ված դրույքը
«ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ- ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ					
1	Տնօրեն	1	105000	44.25	1
2	Փոխտնօրեն	1	66140	27.88	1
3	Հաշվապահ	1	66140	27.88	1
4	Գործավար	1	66140	27.88	1
5	Բուժքույր	1	66140	27.88	1
6	Տնտեսվար	1	66140	27.88	1
7	Հավաքարար	2	66140	27.88	2
8	Պահակ	1	66140	27.88	1
9	Հ/Հ ըմբշամարտի մարզիչ	5	69140	29.14	4.5
10	Բռնցքամարտի մարզիչ	2	69140	29.14	2
11	Ծանրամարտի մարզիչ	1	69140	29.14	1
12	Ակրոբատիկա	1	69140	29.14	1
13	Ֆուտբոլի մարզիչ	1	69140	29.14	1
14	Շախմատի մարզիչ	1	69140	29.14	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	20			19.5
«ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԵՔԻԱԹ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ					
1	Տնօրեն	1	105000	44.25	1
2	Հաշվապահ	1	66140	27.88	1
3	Գործավար	1	66140	27.88	1
4	Դաստիարակ	4	132280	55.75	3.2
5	Դաստիարակի օգնական	4	66140	27.88	4
6	Խոհարար-տնտեսվար	1	90000	37,93	1
7	Երաժշտության ղեկավար	1	132280	55.75	0.6
8	Պահակ	1	66140	27.88	1
9	Բուժքույր	1	66140	27.88	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	15			13.8
«ԱԽՈՒՐՅԱՆԻ ԼԵՌՆԱՐԴՈ ԳՄՅՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ					
1	Տնօրեն	1	105000	44.25	1
2	Հաշվապահ	1	66140	27.88	1
3	Գործավար	1	66140	27.88	1
4	Դաստիարակ	4	132280	55.75	3.2
5	Երաժշտության ղեկավար	1	132280	55.75	0.6
6	Խոհարար-տնտեսվար	1	90000	37,93	1
7	Դաստիրակի օգնական	4	66140	27.88	4
8	Պահակ	1	66140	27.88	1
9	Բուժքույր	1	66140	27.88	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	15			13.8

«ԱԽՈՒՐՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

1	Տնօրեն	1	105000	44.25	1
2	Հաշվապահ	1	66140	27.88	1
3	Գործավար	1	66140	27.88	0.5
4	Դաստիարակ	2	132280	55.75	1.6
5	Երաժշտության ղեկավար	1	132280	55.75	0.5
6	Խոհարար-տնտեսվար	1	90000	37,93	1
7	Դաստիրակի օգնական	1	66140	27.88	1
8	Դաստիրակի օգնական	1	66140	27.88	1
9	Պահակ	1	66140	27.88	1
10	Բուժքույր	1	66140	27.88	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	11			9.6

«ԱԽՈՒՐՅԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

1	Տնօրեն	1	105000	44.25	1
2	Հաշվապահ	1	66140	27.88	1
3	Մեթոդիստ	1	66140	27.88	1
4	Գրադարանավար	3	66140	27.88	3
6	Կազմարար	1	66140	27.88	1
7	Տնտեսվար	1	66140	27.88	1
8	Հավաքարար	2	66140	27.88	2
9	Պահակ	1	66140	27.88	1
10	Պարուսույց	2	66140	27.88	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	13			13

«ԱԽՈՒՐՅԱՆԻ ՖԵՐՄԱՏԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

1	Տնօրեն	1	105000	42.14	1
2	Գործավար	1	66140	27.88	1
3	Հաշվապահ	1	66140	27.88	1
4	Մանկավարժ	21	66140	27.88	21
6	Հավաքարար	1	66140	27.88	1
7	Պահակ	1	66140	27.88	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	26			26

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 54-Ն

<09> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 68-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 68-Ն որոշումը:

Ավագանու անդամներ՝	ԿՈՂՄ 8 (ութ)	ԴԵՄ 0 (զրո)	ՁԵՌՆՊԱՀ 0(զրո)
Արտավազդ Սանթրոսյան			
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գնորգյան			
Կարեն Սերգոյան			
Հովհաննես Բաղդասարյան			
Սամվել Հովիկյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Մխիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

«11» դեկտեմբերի 2014թվական

գ. Ախուրյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9- Ի ԹԻՎ 54 -Ն ՈՐՈՇՄԱՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **հինգ հազար դրամ.**

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **տասնհինգ հազար դրամ.**

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար դրամ.**

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար դրամ.**

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **հիսուն հազար դրամ.**

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ.**

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև **երկու հազար հինգ հարյուր դրամ:**

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝
մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է **երկու հազար հինգ հարյուր դրամ:**

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ.**

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **երկու հազար հինգ հարյուր դրամ.**

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար.
մեկ հարյուր դրամ.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ **մեկ հարյուր հիսուն հազար դրամ.**

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ **երեսուն հազար դրամ.**

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա.հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ **մեկ հազար դրամ.**

բ.ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ **հինգ հարյուր դրամ.**

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ **մեկ հարյուր դրամ.**
2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ **մեկ հազար դրամ.**
3) մեկ շաբաթվա համար՝ **երկու հազար դրամ.**
4) մեկ ամսվա համար՝ **տաս հազար դրամ.**
5) մեկ տարվա համար՝ **քսան հազար դրամ :**

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ **հիսուն հազար դրամ:**

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար դրամ.**
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **հիսուն հազար դրամ.**
3) բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**
4) խաղատների կազմակերպման համար՝ **յոթ հարյուր հազար դրամ.**
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ.**
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ **1 մեկ հարյուր հազար դրամ:**

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **մեկ հազար դրամ.**

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազարհինգ հարյուր դրամ.**

3) այլ արտաքին գովազդի համար՝ **ութ հարյուր դրամ.**

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ **յոթ հարյուր դրամ:**

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **մեկ հազար դրամ:**

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **հիսուն հազար դրամ:**

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **երեք հազար դրամ:**

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **մեկ հազար դրամ:**

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **մեկ հազար դրամ:**

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ **մեկ հազար դրամ:**

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական **մեկ հարյուր հիսուն դրամ,** (վեց և ավելի անձերի դեպքում՝ ութ հարյուր դրամ, շրջիկ ծառայության համար՝ հինգ հարյուր դրամ) կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **տաս դրամ.**

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **մեկ հազարդրամ,**

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **երեք հազար դրամ:**

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 55

<09> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 70 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով ՝ համայնքի ավագանին

որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 18-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին >> N 70 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Ձեռք է բերվել գույք

	Գույքի անվանումը	Քանակը	Արժեքը
198	Բեռնատար ինքնաթափավտոմեքենա ՍԱԶ -53	1	2300000
199	Մանկական կարուսել	1	270000
200	Մանկական կարուսել <Տարզանչիկ>	1	355000

Սակավարժեք առարկաներ

59	Ցնցուղ.իրանի գլխիկ	10	23200

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ 8 (ութ) ԴԵՄ 0 (զրո) ՁԵՌՆՊԱՀ 0(զրո)

Արտավազդ Սանթրոսյան ---------- ---------- ----------

Արմեն Բաբուջյան ---------- ---------- ----------

Արտաշես Գևորգյան ---------- ---------- ----------

Կարեն Սերգոյան ---------- ---------- ----------

Հովհաննես Բաղդասարյան ---------- ---------- ----------

Սամվել Հովիկյան ---------- ---------- ----------

Վանիկ Մկրտչյան ---------- ---------- ----------

Վահան Մխիթարյան ---------- ---------- ----------

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԳԻԹՅԱՆ

«11» դեկտեմբերի 2014թվական

գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 56

<09> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ, ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, ՀԱՇՄԱՆԴԱՄ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ԵՎ ԴԻՄՈՒՄԱՏՈՒ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով դիմումները, համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2014թվականի բյուջեի <Ընտանիքի անդամներ և զավակներ> 10-րդ բաժնի, 4-րդ խմբի, 1-ին դասի 4729 հոդվածից Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, հաշմանդամ դարձած ազատամարտիկներին, դիմումատու, անապահով ընտանիքներին տրամադրել միանվագ դրամական նպաստ, ընդամենը 1350000 /մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար / դրամ:

1)Հայրենական Մեծ պատերազմի վետերաններ և զատամարտիկների ընտանիքներին

Հովսեփյան Սուսաննա –20000դրամ
Ղամբարյան Սիրան –20000դրամ
Գրիգորյան Լերմոնտով –20000դրամ
Միսոյան Անահիտ –20000դրամ
Շահբազյան Պերճանուշ –20000դրամ
Շահբազյան Երջանիկ –20000դրամ
Շիրինյան Արամայիս –20000դրամ
Շիրինյան Հայաստան –20000դրամ
Գևորգյան Գայանե – 20000դրամ
Մանուկյան Սուսաննա –20000դրամ
Բեյբուտյան Սաթենիկ –20000դրամ
Բաբլումյան Սվետլանա –20000դրամ
Սուքիասյան Տիգրուշ –20000դրամ
Սերոբյան Մանվել –20000դրամ
Գասպարյան Լիա -20000դրամ
Սուքիասյան Մելանյա –20000դրամ
Հովհաննիսյան Սիրանուշ - 20000դրամ
Մարգարյան Սերոբ -20000դրամ
Առաքելյան Աիդա - 20000դրամ
Սաֆարյան Եվգինե – 20000 դրամ
Սարկիսյան Վիգեն Հայկի – 20000դրամ
Խաչատրյան Ցոլակ Եզնակի – 20000դրամ
Սերոբյան Ջիվան -1-ին կարգ – 20000 դրամ
Մկրտչյան Հրաչյա -1-ին կարգ – 20000 դրամ
Չիլինգարյան Ալբերտ – 15000դրամ
Հովհաննիսյան Սամվել – 15000 դրամ
Ժամակոչյան Աշոտ – 15000 դրամ
Մաթևոսյան Ռազմիկ – 15000դրամ
Էլոյան Արամ - 15000դրամ
Մաթոսյան Մերուժան - 15000դրամ
Մխիթարյան Նորիկ -15000դրամ
Նիկոյան Մեդրակ – 15000դրամ
Շահբազյան Մանվել -15000դրամ

2)Դիմումատու, անապահով ընտանիքներին

Մարկոսյան Լիպարիտ - 60000դրամ
Մինասյան Վաղարշակ - 50000դրամ
Բաղդասարյան Ոսկեհատ - 50000 դրամ
Կարապետյան Քնարիկ – 30000դրամ
Մխիթարյան Գոհար -25000դրամ
Մկրտչյան Հենրիկ - 25000դրամ
Հարությունյան Մանվել - 25000 դրամ
Ներսիսյան Արշակ - 25000դրամ
Բազլարյան Գոռ - 25000 դրամ
Սաֆարյան Եվգինե - 25000 դրամ
Մելոյան Աշոտ Մանուկի - 25000 դրամ
Իլոյան Օսաննա - 25000դրամ
Շիրինյան Լուսիկ - 25000 դրամ
Հովհաննիսյան Ռուզաննա - 25000դրամ
Սարգսյան Ազատ - 25000դրամ
Սարգսյան Լուսաբեր -20000 դրամ
Արշակյան Ֆլորա -20000դրամ
Ղուկասյան Մարգարիտ -20000դրամ
Աքելյան Նարգիզ -20000 դրամ
Աբաջյան Էմմա -20000դրամ
Զաղոյան Սուսաննա -15000 դրամ
Քոչոյան Սոնա -15000 դրամ
Հարությունյան Սամվել Խորենի -15000 դրամ
Տիգրանյան Հովհաննես -15000դրամ
Քոչոյան Արզուման -15000դրամ
Սևոյան Գայանե -15000 դրամ
Հակոբյան Անիչկա - 10000 դրամ
Տոնոյան Արուսյակ -10000դրամ
Վարդանյան Թամար – 10000դրամ
Հլղաթյան Արուսյակ -10000դրամ
Ադամյան Իրինա -10000 դրամ
Միսոյան Զինֆերա – 10000դրամ
Էլոյան Ամալյա -10000դրամ
Մսրյան Սոֆյա -10000 դրամ

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակչուհի Վիկտորյա Մաթևոսյանի և քաղաքացիներ Կարինե Սիմոնյանի, Գոհարիկ Մուշեղյանի դիմումները մերժել:

Ավագանու անդամներ՝	ԿՈՂԱ 8 (ութ)	ԴԵՄ 0 (զրո)	ՉԵՌՆՊԱՀ 0(զրո)
Արտավազդ Սանթրոսյան			
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գևորգյան			
Կարեն Սերգոյան			
Հովհաննես Բաղդասարյան			
Սամվել Հովիկյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Մխիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

«11» դեկտեմբերի 2014թվական

գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ **N 57**

<09> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄՈՒՄԱՏՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները՝ հողի հարկի և գույքահարկի տույժի գումարները զիջելու մասին

ո ր ո շ ու մ է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղի բնակիչ, բազմանդամ, սոցիալապես անապահով, Լավրենտ Գևորգյանի հողի հարկի տույժի գումարը՝ 45168 /քառասունհինգ հազար մեկ հարյուր վաթսունութ/ դրամ , զիջել :
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղի բնակիչ Ռուստամ Սոսի Ալեքսանյանի դիմումը՝ ԲՄՎ մակնիշի ավտոմեքենայի գույքահարկի տույժի գումարը զիջելու մասին դիմումը մերժել:

Ավագանու անդամներ՝	ԿՈՂՄ 8 (ութ)	ԴԵՄ 0 (զրո)	ՁԵՌՆՊԱՀ 0(զրո)
Արտավազդ Սանթրոսյան			
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գևորգյան			
Կարեն Սերգոյան			
Հովհաննես Բաղդասարյան			
Սամվել Հովիկյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Մխիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԲԳԻԹՅԱՆ

«11» դեկտեմբերի 2014թվական

գ. Ախուրյան